

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

10.04.2019թ.

ք.Վանաձոր

**Մասնակցում էին**

- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյան, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը,
- Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Ա.Սահակյանը, Ա.Ադրյանը, Հ.Հակոբյանը, Ս.Ասրյանը,
- Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

**Օր ա կ ա ր գ ու մ՝**

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեյ. գլխավոր քարտուղարի տեղակալ,  
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր

**Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց**

1. ՀՀ Լոռու մարզպետի օգնական Լևոն Տեր-Սիմոնյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա.Բեջանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Անհատական աշխատանքներ տանել սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարների հետ և հսկողություն սահմանել՝ եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և

**հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Հակոբյանին՝**

Համատեղ աշխատանքներ իրականացնել մարզում իրականացվող հրատապ, սուբվենցիոն և այլ ծրագրերով իրականացվող աշխատանքների պատշաճ լուսաբանման ուղղությամբ:

**3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Ջանազյանին՝**

Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզի տարածքում աղբանոցների և աղբավայրերի մաքրման և վերացման ուղղությամբ և արդյունքների մասին պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

**4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝**

Ներկայացնել տեղեկատվություն և առաջարկություններ մարզպետարանի ենթակայության ՍԱՏԳ-ներում համակարգչային և տեխնիկական ապահովման վերաբերյալ:

**5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝**

ա) Ներկայացնել ամբողջական տեղեկատվություն համայնքներից հավաքագրված ՀՈԱԿ-ների հաստիքների վերաբերյալ:

բ) Սեղմ ժամկետում ներկայացնել տեղեկատվություն Սպիտակի մշակույթի տան տնօրենի զբաղեցրած հաստիքի վերաբերյալ:

**6. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա.Օհանյանին՝**

Անհրաժեշտ հետևողականություն դրսևորել համայնքների ղեկավարների կողմից հայտարարված հողամասերի աճուրդների և մրցույթների օրինական անցկացման նկատմամբ և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

**7. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին՝**

Հանրային ծառայությունների, սպասարկման ոլորտի և սննդի օբյեկտների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով դիմել համայնքների ղեկավարներին՝ պահանջել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն և պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

 Invalid signature



ԱՆԴՐԵՅ ԴՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ԴՈՒԿԱՍՅԱՆ

